№ 11 — ՓՈՍՏ ԵՒ ՕՓԻՐՈՐԴ ՏՈՒԺ

Ա Ր Ա Ր Ա Տ

Տարեկան գինը 5 10 ռուբլի։
Կէս տարուայ՝ 3 ռ., երեք ամսուայ՝ 1 ռ.։
Նամակներ հասցէագրելով Բերաբերդի Խոշէի։
Առանձին համար 11—2 դուռ վիշապ յետ։
Ծանուցմունքներ որ պարտի տպուիլ Արարատի մէջ՝ ընդունելի են միայն օրերով։
Ձեռագրեալ յօդուածներ որ չեն տպուիլ՝ չեն վերադարձուիր։
Յայտարարութիւնները տպուիլ են առանձին թերթիկներով։
Յայտարարութիւնները ընդունելի են միայն Ղազարեան Ս. Շահինեանցի մօտ։
Յայտարարութիւնները ընդունելի են միայն Ղազարեան Ս. Շահինեանցի մօտ։

ԱՐԱՐԱՏ

ԿԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆԴԷՍ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՏՊԱՐԱՆԻ ՄԸ ԳՈՐԾԱԿԱՏՈՒԹԵԱՄԲ

ՄԵՂՎ ՀԱՅՈՑ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ՕՐԱԳԻՐ

27 յունվարի.

Ի ՆԻՍՏ

Ի ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

տաւի գպրոցի հոգաբարձութեանը վճռած գոլով Թողնել Ալէքսանդրապօլն ինձ համար կարեւոր հանգամանքներից ազդուած: Մեծ. հոգաբարձութիւնն երեք անգամ ժողով հրաւիրելով՝ յորդորում էր ինձ գոնէ մի տարի էլ մնալ և զիջանել նախկին ռոճկից 200 ռուբլի: այսինքն տանալ տարեկան 1000 ռ.՝ շաբաթական 24 դասի համար: Նոյն քարոզն էր կարգում ինձ և նորընծայ տեսուչ պ. Յովհաննիսեանցն: վերջին ժողովը հոգաբարձութեան նախագահ Սահակ հայր-սուրբի առնէր. այստեղ նոյն յորդորները, նոյն առաջարկութիւնները էին— չը Թողնել տաղնապի ժամանակ այն գպրոցները, որոնց շատ տարիներ նուիրեալէի սիրտ ու աշխատութիւնք: Այլ ևս ամէն համարեցի հակառակել. համաձայնեցայ մնալ: միայն թէ ռոճկից պակասցրի ոչ 200, այլ 300 ռուբլի, որովհետև տեսայ որ գպրոցն յիրաւի կարօտութիւն ունի: հոգաբարձուք իրանց համար անպատուութիւն էին համարում այդ. բայց ես ուրիշ կերպ չէի համաձայնում: Հարցը վերջացաւ. այդ տարին պէտք է ծառայէի 900 ռուբլով: Դոհունակութեան և ուրախութեան ցոյցերի մասին աւելորդ եմ համարում խօսել:

Սորանից յետոյ տարուան ընթացքում հոգաբարձուներից մէկը միւսը յիշեցնում էին, որ «գալուց տարին մենք չենք մոռանալ քո ղհռոնկոնը» և եթէ ոչ առաջուան չափով՝ գոնէ 1000 ռուբլի կը տանք և դարձալ չենք Թոյլ տալ գնաս. տարին վերջացաւ. ուսուցիչները պէտք է յայտնէին հոգաբարձութեանն իրանց նոր պայմանները: ես էլ տեսուչ պ. Յովհաննիսեանի ձեռքով յայտնեցի, որ Թէպէտ իմ ցանկութիւնս է եկող տարին Թիֆլիս լինել, որի համար յայտնէլէի բարեկամներից և ազգականներից մանց, բայց եթէ այստեղ մնալս գարձեալ հարկաւոր է ճանաչուում՝ նոր ռոճկի հարց չեմ յարուցանիլ, այլ այս պայմանը կը դնեմ, որ հոգաբարձութիւնն աւելացնէ դասերիս քիլայ շաբաթական 6 դաս ևս (իսկ բաց դասեր կային) և իւր որոշած 1000 ռ. վերայ յատկացնէ նոյն ռոճկի համեմատութեամբ դասագին, որով ռոճկիս գումարը կը լինի 1200 ռ. (ձիշդը 1250 ռ.):

Այս առաջարկութեանս պատասխանը պաշտօնապէս ոչ ոք չը տուաւ. միայն հոգաբարձու պ. Ա. Լալայեանցը մասնաւորապէս ինձ ասաց, որ ժողովի մէջ իրանք որոշել են 1000 ռ. տալ և յանձնել են նախագահ Սահակ հայր-սուրբին առաջարկելու ինձ յիշեալ որոշումը. պ. Լալայեանցը խնդրում է ինձ արժ. վարդապետի առաջարկութիւնը չը բացատել: Հայր-սուրբն ինձ չը կանչեց. ես էլ շտապով պէտք էր բացակայէի Ալէքսանդրապօլից անձնական գործերիս պատճառով. յետոյ էլ աւելորդ համարեցի դիմել ում և ինչ և պատասխան խնդրել, մեծ

տաճկերով, որ եթէ պէտք լինէր՝ իրանք մի խօսք կ'ասէին:

Ա՛յս է բոլոր եղելութիւնը: Թո՛ղ ընթերցողն ինքը դատէ, թէ պ. Տիգրանեանցի զուգադատակերի մէջ հանդիսացրած ո՞ր ան ջնա ւ ո ւ թ ի ւ ն ն ի՞նչքան արժէք ունի և ո՞ր շահախնդրութիւնը պէտք է դատապարտուի:

Հ. Ղուկասեանց.

Թ Ի Ֆ Լ Ի Ս.

5 փետրվարի.

ԲԱԳՈՒ

22 յունուարի 85 թ.

(Թղթակցութիւն «Մեղու Հայաստանի» լրագրի)

պ. խմբագիր. «Մեղու»-ի 97 №-ում պ. Ապէլ Ապրէսեանը «բաւական զարմանում է» «Հարկաւոր է հաշիւ տալ» վերնագրով «Մեղու»-ի 73 համարի մէջ տպած անհիմն (?) գրութեան մասին և այլն:

Արդարև, շա՛տ «զարմանալի է», երբ ներկայումս մամուլի մէջ երեւումէ մի չոր ու ցամաք,— անկեղծ Թղթակցութիւն, դա և՛ տարօրինակ երեւոյթ է ոմանց աչքին... ինչ և իցէ: Հարցը «Բագուի հայ արհեստաւորներին և մշակներին օգնող ընկերութիւն»-ի և նրա 60 ռուբլի դրամագլխի մասին է:

Արդ, որովհետև յիշեալ ընկերութեան 40 յօդուածից բաղկացած մի ծրագիր կազմող մասնաժողովի անդամութեան պատիւը ես էլ ունեցել, ուստի և պարտք եմ համարում այդ մասին իմ խղացածս էլ հրապարակ հանել և որի համար կը խնդրեմ «Մեղուի» մի փոքրիկ սիւնակը ինձ նուիրել:

Մինչդեռ մենք, ընդհանուր ժողովի յանձնարարութեամբ կազմում էինք յիշեալ ընկ. ծրագիրը, այդ ընկ. հիմնադիր անդամ պ. Ս. յայտնեց մասնաժողովին, որ այդ ընկ. օգտին նա արդէն հանգանակած ունի 60—63 ռուբլի *): Յիշեալ ընկերութիւնը, դժբաղդաբար ծրագրած չ'առաջ, նա վիժուեց. իսկ նրա օգտին հանգանակուած փողն էլ մինչև օրս, կարծեմ՝ ձեռքն է պ. Ս. մնաց իբրև աւանդ: Բայց Թէ մինչև ե՞րբ ձեռքում է այդ աւանդը, ա՛յդ է բուն խնդիրը, որը և շատ իրաւացի կերպով ջոջափել էր «Մեղուի» 75 №-ի պ. Ս. Ամիրեանցը: Այժմ ի՞նչէք ասում պ. Ապէլ Ապրէսեան **):

*) Այդ գրամադլխի համար, մասնաժողովը մասնաւորապէս գանձապահ էր ընտրել պ. Սամուէլ Նալբանդեանցին, և այդ վերջինս մինչև օրս էլ ապասում է, որ գրամագլուխը իսրան յանձնեն. արդեօք էլի ապասէ, է՛հ, գրօի գանձապահութիւնն էլ նոր մօդա է:

Ա. Ն.

**) Մատնելով պ. Ա. Ապէլեանի և Ս. Ամիրեանի իրար հետ ունեցած սերտ մտերմութիւնը, համոզուում եմ, որ յարակցում եմ և այն, որ իբրև Թէ՝ պ. Ս. տրամադրէ յիշեալ 60—63 ռուբլին նուիրելու շահախնդիր օրիորդաց գպրոցին կամ Թշուառացած ջհմիանոց: Այդ էլ, ըստ իմ կարծեաց, գովելի գիտաւորութիւն է. չէ՞:

Ապէլ. Նալբանդեանց.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Մի տարի առաջ, երբ Մահդին արևելեայ իրրև կեղծ մարգարէ և Սուդանում որոյ բնակիչք դժգոհ էին եգիպտական կառավարութիւնից, սորա պաշտօնեաների վատ Թար և կաշառակուր բնաւորութեան պատճառով, յաջողութիւն գաւ, Գիքս-փաշայի զօրքերը Լարդեց ու մեծ ապստամբութիւնից ձեռք բերեց տեղական ցեղերի վերայ, Անգլիայի կառավարութիւնը Գօրդօն գէներալին, որ մերձաւորապէս ծանօթ էր Սուդանի գործերին, ուղարկեց Քարտում, որ այստեղի եւրօպացիներին դուրս բերէ-այնտեղից և եգիպտոս տեղափոխէ, նրանց ազատելու համար այն վտանգից, որ սպառնում էր նրանց Մահդիի յաջողութիւնը Սուդանում: Գինէրալ Գօրդօնը յաջողութեամբ հասաւ Քարտում: Եւրեւեցաւ, որ այնտեղ հանելը հեշտ է եղել, հէնց Մահդիի ցանկութեամբ, բայց այնտեղից վերադառնալը դժուար: Քարտումը պաշարվեցաւ Մահդիի զօրքերից և դրեթէ տարիից յետ Անգլիան ստիպվեցաւ մտածել Գօրդօնի ազատութեան համար, բայց այդ էլ չը յաջողեցաւ. Վ.օլսլէյ գէներալը շատ ծանրաշարժ գտանվեցաւ, խարվելով Գօրդօնի վերջին ծանուցագրից, Թէ Քարտումում ամէն ինչ յաջողակ է, որ իսկապէս Մահդիի հնարածն է եղել: Քարտումն ընկաւ, նորա հետ և Գօրդօնը: Այս դէպքը շատ չօշափեց Անգլիոյ պատիւը, նորա նշանակութիւնն ու կշիռը վտանգի մէջ գցեց արևելեան խնդրում: ուստի և այսօր ամենքն, ամեն կուսակցութեան պատկանող անձինք, միաբերան բղաւում են առ'ջ, առաջ դէպի Քարտում, Սուդան: Ամեն գոյնի և ուղղութեան լրագիրներն էլ Անգլիայում նոյնն են կրկնում. մինչև իսկ պաշտօնական հանդէսները յորդորում են և պահանջում, որ կառավարութիւնն ամեն միջոց գործ դնէ այդ վտանգաւոր և ծանր վիճակից դուրս գալու համար: Այսուհետև պատուոյ վերականգնումն և վրէժխնդրութիւնն առաջնորդ պիտի լինին անգլիական զօրքին, որ գնում է դէպի Սուդան:

Հաւանական է, որ և Հաբէշստանն այժմ մասնակից պատերազմին, իբրև դաշնակից անգլիացւոց, որովհետև Մասսուանի նաւահանգիստը բաց պիտի լինի Հաբէշստանի առուտրի համար հատկացուած պայմանագրութեամբ, որ Հաբէշստանի կայսրը կապել էր Գլադստոնի հետ և հետագային Սալիսբուրիի հետ. հետաքրքիրը լուր բերեց, որ նոյն կայսրը դաշնակցութիւն է արել Անգլիայի և Իտալիայի հետ: Հաւանական է, որ Անգլիան կը նպաստէ Հաբէշստանի կայսեր. յետ պարձնելու այն մի քանի գաւառներն, որոնց մի քանի տարի առաջ ափրել էր եգիպտոսը:

Հաբէշստանի դաշնակցութիւնը մեծ նշանակութիւն կ'ունենայ գործի յաջողութեան համար, սրովհետև այդ երկիրը կարող է պատերազմի դաշտը հանել մօտ 200,000 քաջ և մահմէդականներին անհաշտ թշնամի քրիստոնեայ զօրք, որին կարող է Անգլիան վճռաւորել եւրօպական զէնքով:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ.

Հռոմից «Neue Freie Presse» լրագրին հեռագրում են, որ «Diritto» լրագրում հրատարակած էր հետեւեալ նամաոդութիւնը. «Թէև դեռ ևս պաշտօնական տեղեկութիւնք ստացած չեն, միայն այսօր (24 ին յունվարի) Vespucci Guttarde նաւերը պէտք է հասցէին Մասսուան և ցամաք հանէին զօրքեր և հրազէնք: Իտալիան իւր վերայ է առնում պարտականութիւն պաշտպանելու յօդուտ Հաբէշստանի և նորա վաճառականութեան դաշնագրութիւնն, որ կնքել է Հաբէշստանի Թագաւորը ծովակալ Գէվէտտի հետ: Մասսուայի նաւահանգիստը բաց կը լինի ամեն ազգերի ազատ վաճառականութեան համար: Հաբէշստանի Թագաւորը դաշնակցութիւն է արել Անգլիայի և Իտալիայի հետ:

—

«Figaro» լրագիրը հաղորդում է ապրատամբների Քարտումն առնելու հեռագրալուրի հետ և մի այլ հեռագրալուր, որ Մահդին Ֆրանսիայի հրատարակիչ Օլիվիէ Պէհնին, որ մահմէդականութիւն ընդունել է, նշանակել է արտաքին գործոց նախարար և լիազօր իշխանութիւն տուել է նրան բանակցութիւն սկսել անգլիացիների հետ, եթէ վերջինները պատրաստակամութիւն կը յայտնեն այս մասին:

—

«Berliner Tageblatt» լրագրին փարիզից հեռագրում են. «Փորձը Օ'Դոնովան Ռոսսի կենաց դէմ կրկին հաստատուց ոչ ազգութիւնը զարթրից «հողային դաշնակցութեան» կազմակերպութեան վերայ. ցայտնի է, որ Թէ և այդ վտանգաւոր ընկերութեան կենդրոնական վարչութիւնն Ամերիկայումն է, բայց նորա գործակիր մասնաժողովն իւր նիստը փարիզումն ունի: Հաստատուց կարծիքն է, որ Լօնդոնում վերջին պայթումները գործողները, դրանից առաջ մի քանի չաբաթ բնակուում էին վարձու սենեակներում, մօտիկ անգլիական դեսպանատնից: «Figaro» լրագիրը հաղորդում է, որ փետրվարի 23-ին փարիզի չրջակայքում տեղի կունենայ իրլանդական յեղափոխական կուսակցութեանց ներկայացուցիչների ժողովը: Այս կուսակցութիւնք հետեւեալներն են. 1) Ֆենիեանք, 2) Անյաղթները, 3) իրլանդական հանրապետական եղբայրութիւն. 4) կուսակցութիւնն, որ կոչվում է Clan ox goel: վերջին կուսակցութիւնն աւելի տարածվածն է և երեք մասն է բաժանվում՝ a. b. և c. a բաժինը կազմուած է Heat Centres — կուսակցապետան առաջնորդներից. b. մասը կազմում են ազատահետաւով պարապողները—բժիշկներ, գեղարուեստներ, փաստաբաններ, իսկ վերջին c. մասին պատկանում են մշակներ՝ դինամիտի գործադրողները. բացի դրանից նորա մէջ են հաշվվում նոյնպէս և Moon Lighters. 23-ի ժողովին կը մասնակցեն 11 պատուիրակներ՝ 6 Ամերիկայից և 5 Իրլանդիայից ու Շոտլանդիայից: Սրանցից եօթն արդէն եկել են և սկսել իրանց պարապմունքը: ժողովի վճռելու հարցերի մէջ նշանաւոր տեղ բռնում է որոշել խնդիրը Թէ պայթուցիները մեծ, Թէ քիչ օգուտ ունին: Շատերը այն կարծիքի են, որ պէտք է պայթումն գործել զօրանոցներում կամ զինարաններում, որպէս զի խռովութիւն գցեն զինուորների մէջ. իսկ այլք աւելի օգտաւէտ են համարում այն բարոյական ազդեցութիւնն, որ գործում են հասարակաց չինուածոց պայթումները, երբ հինգ ֆունտ ստերլինգով կարելի է վնասում կառավարութեան մի քանի հարիւր հազար ֆրանկի չափ պատճառել: փետրվարի 23-ի ժողովի գլխաւոր նպատակներից մէկն էլ է վերոյիշեալ յեղափոխական կուսակցութեանց միութիւնը: Ասում են, որ Ռոսսաց ոչընչականների և գերմանացի սօցիալիստների հետ միութեան առաջարկութիւնը կը մերժվի, իրլանդացիք, Թէև յեղափոխականք են, բայց մի և նոյն ժամանակ խիստ կաթոլիկ են. ուստի և չեն կամենում ոչինչ հասարակաց ունենալ ոչ որթոդոքսների ոչ բողոքականների և ոչ էլ անաստուածների հետ: Ինչպէս յայտնի է իրլանդիկ Անգլիասում ունին կատարելապէս կազմակերպված ոստիկանութիւն, որոյ պարտականութիւնն է հետևել անգլիական պօլիցիային, գտնել մասնիչներին և պատժել այն անձանց, որոնք ապրում են ի հաշիւ ընկերութեան, առանց սրբան օգուտ տալու: Բացի սրանից նա հետամուտ է իրլանդացւոց քաղաքական Թշնամիներին, Թափանցում է նոցա ընտանեկան կեանքի մէջ և ամեն ընտանեկան անվայել դէպք հրապարակում: Պատուիրակներն արդէն որոշումն ընդունած են, որ Ռէչըի իշխանի կեանքը խնայվի:

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

ԲԱԳՈՒԻՑ գրում են. — Կիւրակէ, յունվարի 27-ին, քաղաքային կլուբի դահլիճում, յօգուտ պ. Ազայեանի, ներկայացրին «Սէր և նախապաշարմունք» և «Կարմիր բրիչ»: Ներկայացումը չատ հաւանել են կլուբի դահլիճի դատարկ աթոռները, պատճառ, դահլիճը համարեա դատարկ է եղել: Ներկայ են եղել ընդամենը 10—15 մարդ: Այդ օրվայ ներկայացման ծախքերը ծածկելու համար սաորագրութիւն են բացել այն օրը Ներկայ գտնուող մարդոց մէջ: Արդեօք ժողովրդի զեղարուեստական ճաշակն է փչացել, Թէ դերասաններն են փչացրել բէմը:

* * *

Հայտնեաց բարեգործական ընկերութեան վարչութիւնը խնդրում է տպագրել որ յունվարի 20 պարահանդէսից վճռակախաղով ընդհանուր մուտք եղաւ 2731 ռ. իսկ ծախսը 373 ռ. 50 կ., զուտ արդիւնքը մնաց 2458 ռ. 50 կ.:

Վարչութիւնը պարտք է համարում յայտնել իւր խորին շնորհակալութիւնը բոլոր այն անձանց, որոնք մասնակեցան պարահանդէսի կազմելուն, նա մանաւանդ պր. Շամչինեանին և Շիմկևիչին, որոնք դասաւորեցին վիճակախաղի

իրերը պատուանդանի վերայ, նոյնպէս և նոցա որոնք նուիրեցին վիճակախաղի համար իրերը։

Սրա հետ վարչութիւնը յանձնարարում է ի գիտութիւն այն անձանց, որոնք մինչև այժմ չեն ստացել տարած իրերը, որ ստանան այն ս. Ռօաինեանից, Գանձասարի փողոց, № 25, մինչև փետրվարի 20, սոյն ամի, իւրաքանչիւր օր 3 ժամից մինչև 5 զինի ճաշու իսկ մինչև փետրվարի 20 չ'ստացած իրերը կը համարվին նուիրած յօգուտ ընկերութեան։

***

Պ. Ռ. գրում է ԲԱԳՈՒԻՑ.— Հինգշաբթի յունվարի 31-ին, Բագուայ «Մարզասիրական ընկերութեան» երկսեռ դպրոցաց վարչութիւնը չքեղ կերպիւ տօնեց ս. Վարդանանց 1036 նահատակների տօնը։ Այդ օրը ի պատիւ վարդանանց փակ էին բոլոր նշանաւոր խանութները ժամը 10-ից մինչև 2-ը։

Ս. պատարագին ներկայ էին երկսեռ դպրոցաց աշակերտները և աշակերտուհիները իրենց ուսուցիչներով և վարժուհիով։ Եկեղեցում դպրութիւն էին անում աշակերտուհիք և աշակերտներ։ Պատարագի կէսին, պատարագիչ քահ. Խորէնը տօնին վերաբերեալ քարող ասաց և ցաւակցութիւն յայտնեց տեսնելով որ եկեղեցին թափուր է։ Եկեղեցում հոգեհանգիստը կատարելից յետոյ աշակերաք և աշակերտուհիք ժողովը. դեան հետ ի միասին, դիմեցին երկսեռ դպրոցաց դահլիճը։ Եկեղեցական դասը «Նորահրաչ» շարականը երգելով մտան դահլիճ, ուր սկսուեցաւ հանդէսը «Տէր պահեայ զկայսրն մեր» երգով։

Հանդիսի ժամանակ ասուեցան մի քանի ճառեր և ոտանաւորներ, որոնց միջոցներում երգեցիկ խումբը երգում էր զանազան երգեր։ Հանդէսը վերջացաւ ժամը $1^1/_2$-ին։

***

Նոյն տեղից գրում են.—Վարդանանց տօնի օրը, երեկոյեան, ուսուցչական խմբի աշխատութեամբ և օգնութեամբ բժ. Ա. Վարշամեանի, երկսեռ դպրոցաց դահլիճում պարահանդէս տուեցաւ, յօգուտ «Մարդ. ընկ.» երկսեռ դպրոցաց աշակերտների և աշակերտուհիների։ Պարահանդիսին, որը դաշնամուրի և ասիական սազանդարի ներդաշնակութեամբ էր, առանձին հրաւիրաթղթերով հրաւիրուած էին մասնակցելու բացառապէս «Մարդ. ընկ.» անդամները իրենց ընտանեօք։ Դժբաղդաբար այցելուների թիւը չատ սահմանափակ էր։ Մուտք եղաւ ընդամենը 149 ռ. 47 կ., որից տոմսակների վաճառումից ստացուել էր 102 ռ., իսկ բուֆետից 47 ռ. 57 կ.։

ՊԱՏԱՍԽԱՆԻՔ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ.

Ախալցխայ.—Պ. Ախալցխացուն։ Տըպելով պ. Ասլանեանցի նամակը խմբագրութիւնս իւր պարտքը կատարեց։ Ձեր վերտին դրածը չենք ապում, մանաւանդ որ փաստերը քիչ են։ Այսպէս թէ այնպէս այդ առթիւ մենք այլ ևս ոչ մի նամակ չենք ապել։ Մէկմէկ անուանարկելուց ոչինչ չեն չահուել հասարակական գործերը։

Խմբագիր Պ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ.

Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆՈՐ ԳԻՐՔ
ՁԵՌՆԱՐԿ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇՒՒԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ Ս. ՄԱՆՈՒԿԼԵԱՆԻ։

Վաճառվում է Թիֆլիսում՝ Բ. Շահվերդեանի լրագրական գործակալութեան մէջ, կենդրոնական գրավաճառանոցում, Եղբարց Պօվիանովների բանկային գրասենեակում և պարան Մատուբեանի լամպային մագազինում։ Օտարաքաղաքացիք փոստի ծախք չեն վճարում, դիմելով հեղինակին՝ Тифлисъ, Лабораторная улица, № 11. С. П. Мануэльянцу. Գինն է 2 ռուբլի։ (29) 20—5

Դուրս եկաւ պ. Մատիրոսեանի տպարանից
ՇԻՐՎԱՆԶԱԴԵԻ
ԽՆԱՄԱՐԱՐ ԵՒ ՆՈՐԵՐԻՑ ՄԷԿԸ

Պատկերներ
ՀՐԱՏ. ՍԻՒՆԵՑԻ
Գինն է 50 կոպէկ.

Ծախվում է Շահվերդեանի պավիլիօնում, կենդրոնական և կովկասեան գրավաճառանոցներում։

Օտարաքաղաքացիք թող դիմեն.—Баку. Реалисту Анушавану Калантарову передать Сюнеци կամ Тифлисъ, *Ширванзаде*.

Ծախվում է յօգուտ Բագուի հայ աղքատ աշակերտների.

(33) 3—3

ԾԱԽՎՈՒՄ Է ԿԱԼՈՒԱԾՔ

515 քառակուսի սաժէն գետնով 14-րորդ ուչաստակում, Ալեքէի փողոցում, տուն Աւետիս Մեսրոպովի։ Հարցի մագազինի մօտ, Աւաքելով տան հանդէսը։

2—1

ՇՕԿՈԼԱԴ
Ս. ՍԻՈՒ և ԸՆԿ.
(Ц. 2442.)

ԹԻՖԼԻԶԻՄԷՇՋԱՆՍԿԱՅԵՍ ՈՒՊՐԱՎԱՆ,

յայտնելով, որ ներկայ ամի փետրվարի 20-ին նշանակված է ընտրութիւնը Մեչչանսկի ստարոստայի և սրա կանդիդատի, խնդրում է ամեն դեպուտատներին, որոնց ուղարկած են հրաւիրաթղթեր, չնորհ բերել Ուպրավան։

ԵՒՏՈՒՇԵՒՍԿՈՒ ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ խնդիրների ժողովածուների ԱՌԱՋԻՆ և ԵՐԿՐՈՐԴ մասերը՝ ռուս թարգմանիչների անմիջական կարդադրութեամբ, Թարգմանվում են հայերէն լեզուով՝ բնագրի վերջին— 23-րդ բարեփոխած և ճոխացրած օրինակից և շուտով կը տպագրուին Հայ-ուսուցիչարանների համար։ Այս մասին յայտնելով յարգելի Հայ Հասարակութեան՝ իրաւասէրները պարտք են համարում նախազգուշացնել, որ օրինական պատասխանատուութեան կ'ենթարկուին նորա, որոնք առանց արտօնութեան կը թարգմանեն կամ կը տպագրեն այդ ժողովածուները։

(55) 1—1

ՍՐՁԱԳԱՆՔ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 1885 ԹՈՒԻՆ.

Ներքին Գործոց պ. Նախարարի կարգադրութեամբ սոյն 1884 Թուականի Նոյեմբերի 8-ից «Արձագանքի» հրատարակութիւնը դադարեցրած է ուրեմն ամսով։

«Արձագանքը» վերսին կ'սկսուի հրատարակուիլ 1885 Թուականի յունվարից Նախկին ծրագրով և առաջուայ աշխատակիցների մասնակցութեամբ։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է՝

Տարեկան 5 ռուբլի, կիսամեայ 3 ռուբլի։

«Արձագանքի» սոյն 1884 Թ. բաժանորդներն 60 կոպ. ուշին ստանալու չը հրատարակուած համարների փոխարէն, որը և կարող են ստանալ՝ ներկայացնելով իրանց անդորրագրերը կենդրոնական գրավաճառանոց, ուր առ ժամանակ գտնվում է խմբագրութեան գրասենեակը։

«Արձագանքի» 1885 Թուականի տարեկան բաժանորդները սեպտեմբեր ամսին կ'ստանան երեսուն տպագրական թերթից բազկացած մի մեծահատոր գիրք. գրական-գիտական բովանդակութեամբ։

Խմբագիր—Հրատարակիչ ԱՂԷՔՍԱՆԴՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ Է այսօր, փետրվարի 10-ին կատարել Թիֆլիզում ընտրութիւն ժողովրդական ներկայացուցիչների, իրաքանչիւր եկեղեցւոյ ժողովուրդ ընտրում է երեք ներկայացուցիչ, Թիֆլիզի յարդոյ հայ հասարակութիւնը հրաւիրվում է ի մասնակցութիւն ընտրութեան։

(42) 4—4

Գերմանական լեզուն
ՈՒսուցանում է չուտ և արժան ժամ գնով
ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՑԻՉ
Մ. ՄԻԽԱՅԵԼՍՆԸ.
Եկաւեզեկոչի փողոց. № 121.
4—4

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1885 ГОДЪ.
„РАДУГА“
Третій годъ изданія.

ЕЖЕНЕДѢЛЬНЫЙ ИЛЛЮСТРОВАННЫЙ СЕМЕЙНЫЙ ЖУРНАЛЪ ЛИТЕРАТУРЫ, ИЗЯЩНЫХЪ ИСКУСТВЪ И ОБЩЕСТВЕННОЙ ЖИЗНИ.
50 нумеровъ въ годъ.

Въ 1885 году „Радуга“ дастъ своимъ читателямъ рядъ **романовъ, повестей, разсказовъ и стихотвореній исключительно изъ русской жизни,** съ участіемъ **выдающихся** современныхъ русскихъ писателей.

ИЛЛЮСТРАЦІЯ извѣстныхъ русскихъ художниковъ будутъ воспроизведены самымъ тщательнымъ образомъ, съ помощью новѣйшихъ открытій въ области графическихъ искусствъ. Гравюры будутъ исполнены въ лучшихъ русскихъ и иностранныхъ заведеніяхъ.

БЕЗПЛАТНЫЯ ПРИЛОЖЕНІЯ ВЪ 1885 ГОДУ:

СЦЕНА ПРИЛОЖЕНІЕ: 25 №№ Театральное искуство. Критика. Драматическія пьесы для большой сцены и для любительскихъ спектаклей. Комедіи. Трагедіи. Драмы. Водевили—Рпи участіи извѣстныхъ драматурговъ, какъ Викторъ Александровъ (Крыловъ) Невѣжинъ, князь Сумбатовъ и др. Провинціальная корреспонденція.

АККОРДЪ ПРИЛОЖЕІЕ: 25 №№ Новости изъ музыкальнаго міра. Портреты выдающихся современныхъ композиторовъ и исполнителей. Отчеты о концертахъ. Критическія замѣтки. Къ каждому нумеру „Аккорда“ будутъ приложены также безплатно для фортепіано и пѣнія: исключительно новыя пьесы, танцы, арранжировки изъ новыхъ оперъ и оперетокъ. **НОТЫ**

ВЪ 1885 ГОДУ ВЪ ЖУРНАЛѢ СЦЕНА БУДУТЪ ПОМѢЩЕНЫ ПОРТРЕТЫ РУССКИХЪ ДРАМАТИЧЕСКИХЪ ПИСАТЕЛЕЙ И ВЫДАЮЩИХСЯ АРТИСТОВЪ РУССКОЙ СТОЛИЧНОЙ И ПРОВИНЦІАЛЬНОЙ СЦЕНЫ.

МОДЫ ПРИЛОЖНІЕ: 12 №№ Иллюстрированныя парижскія моды. Текстъ и рисунки изъ Парижа, подъ редакціею Тіерры. Руководство для туалетнаго стола. Косметика. Домашній обиходъ. Домашнее хозяйство. Столъ.

Въ 1885 году будетъ открытъ новый отдѣлъ:
ГИГІЕНА Какъ жить здоровому и какъ помочь больному человѣку. Совѣты врача. При этомъ отдѣлѣ открытъ почтовый ящикъ для совѣтовъ. Пользоваться правомъ этого почтоваго ящика могутъ лишь гг. подписчики.

ВЪ 1885 ГОДУ МЫ ДАДИМЪ НОВОЕ БЕЗПЛАТНОЕ ПРИЛОЖЕНІЕ, ВЪ КОТОРОЕ ВОЙДУТЪ ИЛЛЮСТРИРОВАННЫЯ ОБЩЕСТВЕННЫЯ УВЕСЕЛЕНІЯ:

САЛОНЪ 1) Карты. 2) Общественныя игры. 3) Пасьянсы. 4) Хореографія (танцы). 5) Шарады. 6) Ребусы. 7) Задачи. 8) Фокусы. 9) Эксперименты изъ области химіи и физики. 10) Гимнастика. 11) Спиритизмъ. 12) Обширный шахматный отдѣлъ. 13) Стенографическій отдѣлъ 14) Почтовый ящикъ для гласной корреспонденціи подписчиковъ между собою (право пользованія имѣютъ только подписчики журнала).

ВЕЛИКОЛѢПНАЯ БЕЗПЛАТНАЯ ПРЕМІЯ.

По своему богатому содержанію, обнимающему всѣ явленія общественной жизни, „РАДУГА“ займетъ въ 1885 году безспорно первое мѣсто среди иллюстрированныхъ еженедѣльныхъ журналовъ.

Редакція „РАДУГИ“ не жалѣетъ ни расходовъ, ни трудовъ, чтобы сдѣлать изъ своего журнала органъ русской семьи, и только быстро пріобрѣтенная популярность и значительное число подписчиковъ даютъ ей возможность, несмотря на низкую подписную цѣну, настолько увеличить программу журнала.

Въ 1885 году „РАДУГА“ будетъ выходить аккуратно по четвергамъ.

ПОДПИСНАЯ ЦѢНА НА 1885 ГОДЪ, **5** РУБ.,
со всѣми приложеніями, съ пересылкою во всѣ города Россійской Имперіи, ТОЛЬКО
за границу—**7 руб.**; на $^1/_2$ года—**3 руб.**, за границу—**4 руб.**

Допускается разсрочка платежа годовой подписной цѣны: при подпискѣ **2 р.**, за тѣмъ **1** мар. **1 р.**, **1** апр. **1 р.** и **1** Іюля **1 р.**

Подписка принимается во всѣхъ извѣстныхъ книжныхъ магазинахъ. Гг. иногородныхъ просятъ адресовать: **Въ редакцію журнала „РАДУГА“, Москва.** Столешниковъ пер. д. Корзинкина.

Редакторъ Д. А. МАНСФЕЛЬДЪ.
Издатель Л. МЕТЦЛЬ.

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ, 9-го Февраля 1885 г. Типограф. М. Рот. и К-о. На Гол. проспектѣ Домъ № 41.

Տպարան Մ. Ռոտինեանց և ընկ.